# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

## ԱՌԱՆՑ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՆԱԽԱՊԵՍ ՀՐԱՊԱՐԱԿԵԼՈՒ ԲԱՆԱԿՑԱՅԻՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՎ ԿՆՔՎԱԾ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Պատվիրատուն՝ ՀՀ ֆինանսների նախարարությունը, որը գտնվում է ք.Երևան, Մ.Ադամյան-1 հասցեում, ստորև ներկայացնում է ՀՀ-ՖՆ-ԲԸԱՀ-ԱՇՁԲ-4 ծածկագրով առանց գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու բանակցային ընթացակարգով գնումներ կատարելու ընթացակարգի արդյունքում 2014թ-ի դեկտեմբերի 5-ին կնքված ՀՀ-ՖՆ-ԲԸԱՀ-ԱՇՁԲ-4 ծածկագրով պայմանագրում 2015թ-ի հունիսի 18-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը:

Փոփոխության պատճառ:

Անհրաժեշտություն է առաջացել երկարաձգել Պայմանագրի թիվ-1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի ''Պարբերական վճարների հաշվառման համակարգի ներդրում'', ''Մաքսային ընթացակարգերի և մաքսային հսկողության իրականացման տեղեկատվական համակարգում փոփոխությունների իրականացում'', ''Մաքսային արժեքի հայտարարագրի մշակման համակարգի նեդրում Մաքսային միության մաքսային օրենսգրքին համապատասխան'', ''Մաքսատուրքերի վճարման ապահովման հաշվառման համակարգի ներդրում'' և ''Ապրանքների բացթողնման էլեկտրոնային հաշվառման համակարգի ներդրում''բաղադրիչների աշխատանքների կատարման ժամկետը:

Փոփոխության նկարագրություն:

Պայմանագրի թիվ-1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի ''Պարբերական վճարների հաշվառման համակարգի ներդրում'', ''Մաքսային ընթացակարգերի և մաքսային հսկողության իրականացման տեղեկատվական համակարգում փոփոխությունների իրականացում'', ''Մաքսային արժեքի հայտարարագրի մշակման համակարգի նեդրում Մաքսային միության մաքսային օրենսգրքին համապատասխան'', ''Մաքսատուրքերի վճարման ապահովման հաշվառման համակարգի ներդրում'' և ''Ապրանքների բացթողնման էլեկտրոնային հաշվառման համակարգի ներդրում''բաղադրիչների աշխատանքների կատարման ժամկետը երկարաձգվել է, այն սահմանվելով մինչև 2016 թվականի հունվարի 25-ը: Աշխատանքների կատարման ժամկետը երկարաձգելու նպատակով 18.06.2015թ. կնքվել է համաձայնագիր:

Փոփոխության հիմնավորում: Առկա է տվյալ գնման գործընթացի մասով մասնագիտական խմբի եզրակացությունը:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնումների համակարգող՝ Գ.Ղազարյանին:

Հեռախոս՝ 011 800 117:

Էլ. փոստ՝ gugks@mail.ru:

Պատվիրատու՝ **ՀՀ ֆինանսների նախարարություն**

Համաձայնագիր-2
05.12.14թ. կնքված N ՀՀ-ՖՆ-ԲԸԱՀ-ԱՇՁԲ-4 գնման պայմանագրում
փոփոխություններ կատարելու մասին

ք. Երևան «18» հունվարի 2015թ.

ՀՀ ֆինանսների նախարարությունը այսուհետ՝ «Պատվիրատու», ի դեմս ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի ղեկավար Ա.Արզումանյանի մի կողմից, և «Այյունեթվորքս» ՍՊԸ-ն, այսուհետ՝ «Կատարող», ի դեմս ընկերության տնօրեն Ա.Եսայանի մյուս կողմից, երկուսը միասին այսուհետև՝ կողմեր, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ և հիմք ընդունելով 05.12.14թ. կնքված N ՀՀ-ՖՆ-ԲԸԱՀ-ԱՇՁԲ-4 գնման պայմանագրի /այսուհետև՝ Պայմանագիր/ 7.3-րդ կետը կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

Կողմերը որոշեցին՝

1,1. Պայմանագրի թիվ-1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի ''Պարբերական վճարների հաշվառման համակարգի ներդրում'', ''Մաքսային ընթացակարգերի և մաքսային հսկողության իրականացման տեղեկատվական համակարգում փոփոխությունների իրականացում'', ''Մաքսային արժեքի հայտարարագրի մշակման համակարգի նեդրում Մաքսային միության մաքսային օրենսգրքին համապատասխան'', ''Մաքսատուրքերի վճարման ապահովման հաշվառման համակարգի ներդրում'' և ''Ապրանքների բացթողնման էլեկտրոնային հաշվառման համակարգի ներդրում'' բաղադրիչների աշխատանքների կատարման ժամկետը երկարաձգել, այն սահմանելով մինչև 2016 թվականի հունվարի 25-ը:

2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1. Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2. Սույն համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

2.3. Սույն պայմանագրում կողմերի չնշված պարտավորությունները թողնվում են անփոփոխ:

2.4. Սույն համաձայնագիրը և հավելվածը կազմված է հայերեն լեզվով, /երկու/ օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ ԵՎ ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| ՀՀ ֆինանսների նախարարություն | «Այյունեթվորքս» ՍՊԸ |
| Ք.Երևան, Մելիք Ադամյան 1 | ք. Երևան, Տերյան 19-4 |
| ՀՎՀՀ 02629081 | ՀՎՀՀ 02588485 |
| Հ/Հ 900011017366, 900011054054 | Հ/Հ 1930042785480100 |
| Հ ՖՆ աշխատակազմի գանձապետական վարչություն | «Կոնվերս բանկ» ՓԲԸ |
| ՀՀ ՖՆ աշխատակազմի ղեկավար՝ | «Այյունեթվորքս» ՍՊԸ-ի տնօրեն՝ |
| Ա.Արզումանյան | Ա.Եսայան |